ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԼԻՔՈՎ

ԱՊՐԵԼ ՀՆԻ ՊԵՍ ԱՆՀՆԱՐ Է

Հանրապետությունը տագնապալի օրեր է ապրում, ստեղծվել է ճգնաժամային իրադրություն: Այն համակել է տնտեսությունը, սոցիալական ոլորտը, նաև իշխանության կառուցվածքը: Իսկ դա նշանակում է, որ մենք նախ և առաջ գտնվում ենք քաղաքական ճգնաժամի մեջ:

Ո՞րն է ներկա քաղաքական ճգնաժամի բնորոշ գիծը: Դա հեղափոխական վերափոխումների իրողության առկայությունն է: Իսկ սա իր հերթին նշանակում է, որ ներքևներում ժողովրդական լայն մասսաներն այլևս չեն ուզում ապրել հին ձևով, այսինքն՝ այնպես, ինչպես ապրել են ամբողջ տասնամյակներ՝ ստալինիզմի սարսափներից մինչև բրեժնևյան երեսպաշտության ու անբարոյականության տարիները:

Քաղաքական ճգնաժամը, որպես կանոն, իր հետ բերում է հին և նոր մտածելակերպի, հին և նոր գործելակերպի միջև բացահայտ առճակատում: Այսօր վիճակն այդպիսին է նաև մեզանում:

Այժմ պատասխան է ուզում այն հարցը, թե մեզ ուր կարող է տանել առճակատումը, ուր ենք գնում մենք ազգովին: Մենք ուղղակի պարտավոր ենք պատասխան տալու այդ հարցին և իրավունք չունենք չգտնելու պատասխանը:

Մեծ գիտելիքներ և մեծ փորձառություն պետք չէ, որպեսզի տեսնենք, որ ներկա քաղաքական ճգնաժամից դուրս գալու երկու ուղի կա՝ բռնության ուղի և երկխոսության վրա խարսխվող միասնական գործողությունների, ազգային շահերի պաշտպանության ուղի:

Առաջին ուղին, այսինքն բռնության ուղին դեպքերի տրամաբանությամբ կարող է տանել դեպի արյունալի իրադարձությունների: Հանրապետության իշխանության կազմվածքի և ժողովրդական զանգվածների միջև նման առճակատման հնարավորը անընդունելի է և՛ մեկ, և՛ մյուս կողմի համար, քանի որ ներկայումս դա չի բխում ո՛չ մեկ և ոչ էլ մյուսի շահերից: Հայ ժողովրդի երկարատև պատմության մեջ նրա թշնամիները միշտ ճգնել են մեր ներսում փնտրել ու գտնել մեր պարտության բանալիները: Վկա՝ 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը, 1920–1921 թվականների քաղաքացիական եղբայրասպան կռիվները Հայաստանում: Վկա՝ 1930-ական թվականների մատնությունները և հայերի ձեռքով հայերի սպանությունները: Պատմությունը տխուր և զավեշտական պատումների միագումար չէ բնավ, այլ նրա համար է, որպեսզի խորհենք ու դասեր առնենք: Եվ առաջին դասերից մեկը, որ մենք արդեն վաղուց պետք է սովորած լինեինք, այն է, որ ազգի ներսում ամեն մի բռնություն նրան մոտեցնում է հոգևոր ու բարոյական այլասերման եզրին:

Ներկայումս մեր համաժողովրդական շարժման առջև ծառացած են լուրջ պրոբլեմներ, ժողովրդին հուզող կենսական հարցեր, որոնց լուծումը մտահոգում է շարժման մասնակիցներին՝ մեծից փոքրին՝ անկախ գաղափարական-քաղաքական հայացքներից և սոցիալական վիճակից:

Մենք լավ գիտենք, որ ղարաբաղյան շարժումը սկսվեց իբրև ամեն տեսակ բռնության դեմ ուղղված շարժում:

Ղարաբաղյան շարժումը սկսվեց էկոլոգիական բռնության դեմ ուղղված ընդվզումից: Ապա այն ուղղվեց Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական իշխանությունների կողմից 1921 թվականից ի վեր իրականացրած բիրտ բռնության դեմ: Այնուհետև համազգային ընդվզում Սումգայիթի ոճրագործության դեմ: Հետո շարժումը աստիճանաբար ուղղվեց վարչահրամայական ապարատի կողմից 70 տարի շարունակ ժողովրդի նկատմամբ իրականացված բռնությունների դեմ: Շատ չանցած այն ուղղվեց իշխանությունների կողմից շարժման նկատմամբ գործած բռնակտերի դեմ, որոնք իրենց առավել ցայտուն արտահայտությունը գտան «Զվարթնոց» օդանավակայանում իրականացրած տմարդի ջարդի, հանրապետության գյուղեր ու քաղաքներ ռազմական զանգվածային ուժեր նետելու դեմ: Շարժումը հանդես եկավ անհատի ազատության դրոշով, անձի իրավունքների բռնացման դեմ, որը անսքող դրսևորվեց հատկապես «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալության դեմ ծայր առած համաժողովրդական վրդովմունքի տեսքով:

Ահա թե ինչու ղարաբաղյան շարժումը մենք իրավամբ համարում ենք խոր, արմատական դեմոկրատական շարժում ինչպես իր ձևով, այսինքն՝ մասնակիցների զանգվածային ծավալներով, այնպես էլ իր բովանդակությամբ, այսինքն՝ նպատակների ազնվությամբ ու մարդասիրությամբ:

Մեր հասարակարգը հակված է մշտական բռնության: Դա տրադիցիա է, սովորույթ, կյանքի կերպ, մտածելակերպ ու վարվելակերպ: Դաժանությունը, որ բռնության ծնունդ է, դարձյալ մեր տրադիցիան է: Արդյո՞ք քաղված է բռնանալու սովորույթը վերակառուցման քաղաքականության ուժով: Ո՛չ: Այն, ինչ բրեժնևյան ժամանակներում կատարվում էր ամեն օր ու ամեն ժամ՝ դանդաղ, էվոլյուցիոն ճանապարհով, վերակառուցման ժամանակ բացահայտվեց այնպիսի արագությամբ ու ծավալներով, որ երկու-երեք տարի առաջ մտածել անգամ անկարելի էր: Մեր ժամանակի մեծ բռնությունը սկսվեց Սումգայիթից և շարունակվում է մինչև այսօր, ու դեռ ոչ ոք չգիտե, թե երբ է այն վերջ ունենալու: Եվ արդյոք ունենալո՞ւ է:

Բռնությունը անհանդուրժողականության ծնունդ է: 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունը եղավ անցյալի ժխտումը այնպիսի հետևողականությամբ ու ծավալներով, որ ռուսաստանյան հասարակարգը անմիջապես երկճեղքվեց միմյանց դեմ-հանդիման կանգնած երկու թշնամական ճամբարների: Այդ անհանդուրժողականության պրակտիկ իրականացումը առավել ցայտուն դրսևորվեց քաղաքացիական կռիվների տարիներին՝ լի բռնություններով ու արյունով: Այդ կռիվներից հաղթանակով դուրս եկած կողմը, որ արդեն իշխանություն էր, պետական կազմավորում, չէր կարող խաղաղ կյանքին անցնելու ժամանակ լիովին մի կողմ դնել քաղաքացիական կռիվների տարիներին փորձարկված պայքարի միջոցները և, դժբախտաբար, օրինաչափ մեծ ծավալներով: Բռնությունը դարձավ հասարակության ամենօրյա կյանքի կերպը: Բռնության նախկին առևտրականների ու արդյունաբերողների, ունևոր և միջակ գյուղացիների, մշակույթի գործիչների և գրողների, հին մասնագետների նկատմամբ: Ապա պայքար, անողոք պայքար կուսակցության ներսում՝ ամեն տեսակ հնարավոր աջերի ու ձախերի, տրոցկիստների ու բուխարինականների դեմ, սեփական երկրի միլիոնավոր անմեղ քաղաքացիների, գյուղացիների, մտավորականների դեմ: Բանտերն ու համակենտրոնացման ճամբարները առօրյա երևույթ դարձան: Եվ այդ ամենը շարունակվում էր կոմունիզմի գաղափարների նկատմամբ նվիրվածության, կուսակցության միասնության պահպանման անհրաժեշտության կեղծ պատճառաբանությամբ: Խրախուսվելով ու կիրառվելով կենտրոնի նախաձեռնությամբ, բռնությունը տարածվեց երկրով մեկ, ծայրամասերով ու հանրապետություններով՝ ստանալով ամենալայնածավալ ձևեր:

Այդպես եղավ նաև Խորհրդային Հայաստանում: Շատերն էին մրցում իրար հետ երեկվա ընկերոջը ու բարեկամին պատուհասելու համար:

Ներկայումս մեզանում արդյո՞ք կան կայուն երաշխիքներ լայն ծավալներով բռնություն իրականացնելու դեմ, կա՞ն արդյոք իրավական ամուր հիմքեր, որ դրանք չեն կրկնվելու: Դժբախտաբար չկան: Այսօր էլ երբեմն տարբեր ատյաններում հայ ժողովրդի ազգային հրատապ պրոբլեմների լուծման համար արդարացի պայքարի ելած մարդկանց հասցեին սպառնալիքներ են լսվում, նույնիսկ օգտագործվում է «թշնամի» բառը՝ ոմանց հավանության բացականչությունների ներքո: Նման դեպքերում բյուրոկրատիան անմիջապես տարերքի մեջ է մտնում: Պակասում է «ժողովուրդ» բառը, որպեսզի ամբողջանա «ժողովրդի թշնամու» կերպարը՝ 1937 թվականի հայտնի պիտակավորմամբ: Մեր հիշողության մեջ հաճախ է արթնանում այդ նույն թվականին տեղի ունեցած Հայաստանի կոմկուսի 10-րդ համագումարը և սեպտեմբերին տեղի ունեցած պլենումը, որոնք անցան «ժողովրդի թշնամիներին» անխնա ոչնչացնելու անգիջում կոչերով:

Այո՛, դեռ կենդանի է այլախոհության համար «թշնամուն» պատժելու, նրան անէացնելու կիրքը, միայն թե այն առայժմ անթեղված է մոխրի տակ, բայց, հարմար առիթը ներկայանալու դեպքում, նորից կարող է մտնել իր ամորալ դերի մեջ, եթե ժողովուրդը, ազգի գիտակից ուժերը զգոն չլինեն:

Բյուրոկրատիայի համար թշնամի է նա, ով փորձում է հրաժարվել տասնամյակների ընթացքում բարոյական կեղծ արժեքների մասին ստեղծված ստերեոտիպներից և կանգնել իրական հողի վրա, ով ցանկանում է արմատական վերափոխություններ հանրապետությունում, ով մտածում է այն մասին, թե ժողովրդին ինչպես կարելի է փրկել կաշառակերների և կոռուպցիայի փորձված վարպետների կեղեքումներից, ով բողոքում է կենտրոնական իշխանությունների և կենտրոնական մասսայական ինֆորմացիայի միջոցների կողմից հայ ժողովրդի նկատմամբ սանձազերծված հալածանքների դեմ, ով ճիգ է անում փոխել մարդու նկատմամբ անհոգի վերաբերմունքի՝ սիստեմից ծնված իրողությունը: Չարի ու բարու հավերժ պայքարը շարունակվում է:

Ներկա համազգային քաղաքական ճգնաժամից դուրս գալու երկրորդ ուղին, ինչպես ասվեց, երկխոսության, համատեղ մշակված գործողությունների ուղին է:

Հանրապետության նախկին ղեկավարությունը վճռականապես մերժեց ժողովրդական շարժման հետ իշխանությունների երկխոսության որևէ հնարավորություն: Նոր ղեկավարությունը գնաց երկխոսության, բայց, ինչպես ցույց տվեց փորձը, այն անկայուն, անհետևողական բնույթ կրեց, ունեցավ տանջալից գործընթաց: Երբ հարկ է լինում գործնական կոնկրետ քայլերի դիմելու, ղեկավարությունը առաջ ու հետ է անում, վախենում է այն մտքից, որ չլինի թե հանկարծ իջնի «փողոցի մակարդակին»: Միաժամանակ պարզ է, որ այսպիսի գործելակերպով երկխոսությունը դժվար է:

Ինչո՞ւմն է կայանում ժողովրդական շարժման և իշխանությունների երկխոսության հիմնական դժվարությունը: Նրանում, որ անցած տասնամյակներին գնալով մշտապես խորացել է ջրբաժանը մի կողմից հանրապետության վարչահրամայական ապարատի և բյուրոկրատիայի, մյուս կողմից աշխատավոր զանգվածների միջև: Հատկապես վերջին 10—15 տարիները եղան ղեկավար շատ կադրերի բարոյական անկման ու այսպես կոչված շարքային մարդու անձի արժանապատվության ոտնահարման տարիներ:

Ժողովուրդը ակնկալում էր, որ հանրապետության ղեկավարության փոփոխությունը կտրուկ փոփոխություն առաջ կբերի մեր կյանքում, կմաքրի մթնոլորտը, որ վերջապես, պայքար կսկսվի սոցիալական արդարության համար: Բայց այդ բանը, ըստ էության, տեղի չունեցավ:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա ընտրությունների կապակցությամբ բյուրոկրատիան կեղծ լուրեր է տարածում և մեղադրանքներ հասցեագրում ժողովրդական շարժման առանձին մասնակիցների հասցեին, նրանց մեղադրելով այն բանում, թե իշխանության են ձգտում և դա ներկայացվում է սարսափի հեռանկարով: Հարց է առաջանում. իսկ իշխանությունն ի վերուստ պատկանում է միայն մի խումբ մարդկա՞նց: Իսկապե՞ս այսօրվա պաշտոնյան կարծում է, թե ինքը ծնվել է միայն ղեկավար լինելու համար: Մի՞թե պաշտոնը մասնագիտություն է: Իսկ ինչո՞ւ չեն կարող պաշտոններ ստանձնել նաև նրանք, ովքեր չեն բաժանում այսօրվա ղեկավարների տեսակետները, կարծիքները, մտածելակերպը, գործելակերպը:

Մենք բոլորս մի բան պարտավոր ենք հաստատ իմանալու. խաբուսիկ է առանձին վերցրած ամեն մի անհատի բարեկեցությունը և ապահովությունը, եթե այն խարսխված չէ ընդհանուրի անվտանգության երաշխիքների վրա: Մի՞թե կարող ես բախտավոր լինել, երբ դժբախտ է հարևանդ: Մի՞թե անբարոյական չէ, երբ դու լիության մեջ ես, իսկ աղքատ ու անկար է ազգակիցդ: Եվ, ընդհանրապես, մի՞թե կարող է բախտավոր լինել դժբախտ ազգի զավակը:

Իշխանությունների և շարժման միջև ժամանակ առ ժամանակ առկայծվող առճակատումը արտահայտվում է նաև Գերագույն խորհրդի աշխատանքում, այն էլ ամեն քայլափոխի: Եվ դա ոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ ձևի: Իհարկե, հաճելի չէ նստաշրջանների ընթացքում առանձին դեպուտատների չափից ավելի ակտիվությունը, ամբիոնի չարաշահումը: Բայց հենց այդ դեպուտատների անփորձությունից էլ շատ վարպետորեն օգտվում են նրանք, ովքեր ամեն առիթ փնտրում են վարկաբեկելու շարժումը: Մի՞թե պարզ չէ, որ ընդամենը մեկ տարվա դեպուտատական կենսագրություն ունեցողը չի կարող իրեն և իր տեսիլքը պառլամենտին ներկայացնել այնպիսի վարպետությամբ, ինչպիսի վարպետությամբ ներկայացնում են 15—20 և ավելի տարիներ դեպուտատական աթոռներ զբաղեցրած անձինք:

Քանի որ խոսք գնաց սխալ թույլ չտալու մասին, ապա ասենք, որ մեր սիստեմը ստեղծել է բազմաքանակ անհատների մի տիպ, որը կյանքում իր ողջ ուշադրությունը և ջանքերի զգալի մասը կենտրոնացնում է այն բանի վրա, որպեսզի ստեղծված իստեբլիշմենտի տաքուկ անկյուններում հանկարծ չսխալվի: Անձնապաշտության այդ վատթարագույն տեսակը ամենավտանգավորներից է հասարակության համար, հատկապես մեր բուռն ժամանակներում, երբ սեփական անձի բարեկեցությունը և անվտանգությունը երբեմն հարկ է լինում վտանգի տակ դնել հանուն այն բանի, որպեսզի առաջ մղվի ընդհանուրի շահը:

Մենք չենք արդարացնում ժամերով դեպուտատներին շենքում բռնափակված պահելը: Դա անթույլատրելի, դատապարտելի է բոլոր առումներով: Բայց չենք կարող չասել նաև, որ դրա մեղքի մեծ բաժինը ընկնում է Գերագույն խորհրդի նախագահության, մասնավորապես, նստաշրջանը վարողների վրա: Հին աշխատաոճը այնպես էլ չի հաղթահարվում, ղեկավարման միջոցները ցավալիորեն մնում են նույնը: Նախագահությունը չի ըմբռնում, որ հանրապետությունում արմատապես փոխվել է իրավիճակը, որ ղեկավարման նախկին հեշտ՝ հրամայական ոճը այլևս ոչնչի պետք չէ: Նիստը վարողները մշտապես միջամտում են ելույթ ունեցողներին, ընդհատում նրանց, միաժամանակ իրենց խոսքը համարում են անառարկելի ճշմարտություն: Նախագահության անդամներից ոմանք էլ իրենց մշտական իրավունքն են վերապահում ամեն անգամ ձեռքն առնել միկրոֆոնը և, բրեժնևյան անկատար սահմանադրության այս կամ այն կետը վկայակոչելով, ընդհատել ելույթ ունեցողներին, նրանց «դաս տալ» և «ուշքի բերել»:

Իշխանության մարմինների և շարժման փոխհարաբերությունների վրա ուղղակի քայքայիչ ազդեցություն է ունենում այն, որ ոչ ֆորմալ կազմակերպությունների հետ նախապես ձեռք բերված պայմանավորվածությունը խախտվում է առաջին իսկ «նպաստավոր» պահին: Այսպես, օրինակ, համաձայնություն էր ձեռք բերվել անկախ թերթ հրատարակելու մասին: Առաջին համարը լույս տեսավ տանջալից դժվարություններով: Հետո զանազան պատճառաբանություններով արգելք դրվեց թերթի վրա: Եվ դա այն դեպքում, երբ հարևան «ինտերնացիոնալ» հանրապետության ժողովրդական ճակատը երկու թերթ է հրատարակում ադրբեջաներեն և ռուսերեն տարբերակներով: Բազմաթիվ օրինակներից բերենք մեկը ևս: Գերագույն խորհրդի 10-րդ նստաշրջանի օրակարգում ժողովրդի ճնշման տակ մտցվեց Հայաստանի հետ Արցախի վերամիավորման հարցը: Նախօրյակին, Գերագույն խորհրդի նախագահության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի նա պաշտոնապես հրավիրի Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի կազմը՝ համատեղ նիստ անցկացնելու և համատեղ որոշում ընդունելու համար: Եվ ի՞նչ: Նախագահությունը հեռագրեց Ստեփանակերտ՝ հրավիրելով միայն երեք հոգու: Արդյոք դա չէ՞ր նշանակում, որ նախագահությունը հրաժարվում էր ընդհանրապես հարցը քննարկելու մտադրությունից: Դրան հակառակ Արցախի Ազգային խորհրդի անդամները ժամանեցին Երևան, տեղի ունեցավ նստաշրջանի համատեղ նիստ, հարցը քննարկվեց և դեկտեմբերի 1-ին ընդունվեց հայտնի որոշումը:

Արցախի և Հայաստանի միավորման մասին որոշումից հետո անցել է երեք շաբաթ, բայց հանրապետության իշխանությունները շարժվում են առաջվա նման: Ղարաբաղում հայը նորից իրեն միայնակ է զգում, քանի որ այնտեղ մենք դեռ չենք սկսել ծավալուն գործեր: Կենտրոնի և Բաքվի կամքից անկախ, Արցախը բոլոր ուղղություններով՝ ինչպես տնտեսապես, այնպես էլ մշակութային կյանքով, պետք է ներառնվի Հայաստանի մեջ, միաձուլվի նրա հետ:

Ներկայումս կարևոր նշանակություն է ստանում հանրապետության պետական կառույցի և ժողովրդական շարժման փոխհարաբերության հարցը:

Մենք պետք է խստիվ տարբերենք հայ ժողովրդի ազգային պետականությունը և պետական մարմիններում նստած բյուրոկրատներին, անարժան պաշտոնյաներին: Այսօրվա պաշտոնյաները ժամանակավոր են: Ժամանակավոր են լինելու նաև նրանք, ովքեր վաղը փոխարինելու են դրանց: Ազգային պետականությունը հարատև է: Ամուր պետականություն ունենալը բոլորիս հոգսը պետք է լինի: Անհրաժեշտ է ժողովրդի, հատկապես երիտասարդ սերնդի մոտ խոր հարգանք պատվաստել հայ ժողովրդի պետականության նկատմամբ: Մենք մեր բարձր կազմակերպվածությամբ միայն կարող ենք դիմակայել, այսպես կոչված, «ինտերնացիոնալիստ» հարևանի ներկայի և ապագայի բոլոր ոտնձգություններին: Ժողովրդական շարժման խնդիրը, կարծում եմ, ոչ թե հանրապետության պետական կառույցը ծովը թափելն է, այլ դրա կատարելագործումը, աղտեղություններից մաքրելը, պետական կառուցվածքի ներսում այնպիսի մեխանիզմների ստեղծումը, որոնք հնարավորություն տային համակողմանիորեն պաշտպանել հայ ժողովրդի շահերը, Հայաստանը դարձնել դեմոկրատական, իրավական, ժամանակակից բարձր զարգացած հանրապետություն:

Գերագույն խորհրդի վերջին նստաշրջանում շատ խոսակցություն գնաց և շարունակվում է գնալ, թե իբր շարժումը այսօր հանդես է գալիս Հայաստանի քաղաքական անկախության պահանջով: Եվ դա հոլովում ու հիպերբոլիկ չափերի են հասցնում շարժման հակառակորդները:

Հարկ չկա ապացուցելու, որ մեր ժողովուրդը իր պատմության անգամ ամենածանր պահերին չի կորցրել լրջախոհությունը և սթափ մտածելու ունակությունը: Այսօր էլ այդպես է: Այսօր էլ նա գիտակցում է, որ քաղաքական անկախությունը ամեն մի ժողովրդի իղձն է և բնական իրավունքը: Բայց հայ ժողովուրդը իր ամբողջության մեջ ներկայումս նման պրակտիկ պահանջ չի առաջադրում: Թե ինչպես կզարգանան դեպքերը ապագայում, մենք չգիտենք: Բայց ժողովուրդը ո՛չ Հայաստանում, և ո՛չ էլ ներքին ու արտաքին սփյուռքում ներկայումս առաջ չի քաշում խորհրդային ֆեդերացիայից դուրս գալու հարց: Նա այժմ դնում է հանրապետության ինքնիշխանության, տնտեսական անկախության, սեփական գործերը ինքնուրույնաբար, առանց թելադրանքի վարելու, արտասահմանի, մասնավորապես սփյուռքի հետ անմիջական հարաբերություններ հաստատելու և նման կարգի ուրիշ կենսական խնդիրներ: Այսօր մեր ամենօրյա հոգսը աղետի գոտին է, փախստականներն են, կյանքի ու ապրուստի ամենանվազագույն պայմանների ստեղծումն է հարյուր հազարավոր անօթևան մարդկանց համար: Հայ ժողովրդական շարժումը պարզ ու հստակ արտահայտել է իր կարծիքը. մենք այսօր պայքար ենք մղում, որպեսզի մեր հանրապետությունը ձեռք բերի մարդկային կերպարանք, որպեսզի այն հումանիզացվի և տանելի լինի այնտեղ ապրելը: Այդ ամենը մեզ համար բացարձակ ճշմարտություն լինելով, այս դժվարին պահին մենք միաժամանակ բարձրաձայն ասում ենք, որ այլևս չենք հաշտվելու մեր ազգային շահերի, մեր ազգային արժանապատվության ոտնահարման որևէ փաստի հետ:

Մենք ազգովին պետք է պաշտպանենք մեր շարժումը, ջանանք, որ այն չպառակտվի, երբ դեռ ըստ էության լուծված չեն նրա առջև կանգնած արմատական հարցերը: Չէ՞ որ համաժողովրդական շարժումը մեր դարավոր համակերպության և ստրկական հոգեբանության մերժումն է, մեր հոգևոր ազատագրության, մեր ազգային մեծ վերածնության և մեծ սլացքների սկիզբը:

Այդ վերածնության սկիզբը, որ դրել է շարժումը, վաղը իրականացնելու է նոր սերունդը, որը բնական ընթացքով անխուսափելիորեն փոխարինելու է գալիս հինին, այսինքն՝ մեզ: Այդ սերունդն է, որ իր այսօրվա մեծ հայրենասիրության, ազգի շահերին ծառայելու պատրաստակամության հետ միասին դեպի վաղվա օրն է տանելու մեծ մարդասիրություն ու մաքուր իդեալներ:

Այսօր հարկ է միավորել ջանքերը, որոնք հնարավոր է արագ դուրս գալ ոչ միայն քաղաքական ու գաղափարական ճգնաժամից, այլև, որ շատ ավելի կարևոր է՝ տնտեսական ու սոցիալական անմխիթար կացությունից: Մեր սայլը մենք բոլորս համատեղ ենք քաշելու, համատեղ ենք տեր կանգնելու մեր ճակատագրին:

Մենք բոլորս երազում ենք հզոր, հարուստ, ազատ, դեմոկրատական, բազում բարեկամներ ունեցող, հետևապես՝ անվտանգ Հայաստանի մասին:

Մենք երազում ենք տեսնել մեր քաղաքակիրթ ժողովրդին արժանի դեմոկրատական պառլամենտ, որի դեպուտատները անկախ կլինեն իշխանություններից և ազատ՝ ներպառլամենտական և արտապառլամենտական ամեն տեսակի ճնշումներից: Երազում ենք հանձինս նրանց տեսնել բարձր կուլտուրայի և բարձր բարոյականության տեր, իրենց գործընկերներին խորապես հարգող, նրանց գիտելիքներն ու փորձը գնահատող, համեստ ու առաքինի մարդկանց, որոնց գերագույն շահը միայն ու միայն մեկն է՝ իրենց ժողովրդին ազնվորեն ու անմնացորդ ծառայելը:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ